Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն Հարություն Մովսիսյանի գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Հարություն Մովսիսյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ղազախստանի Հանրապետություն (Աստանա), 2025թ. սեպտեմբերի 23-ից 27-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

ԱՊՀ ընդերքի հետախուզման, օգտագործման և պահպանության միջկառավարական խորհուրդ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ԱՊՀ ընդերքի հետախուզման, օգտագործման և պահպանության միջկառավարական խորհրդի 28-րդ նիստ

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Նիստի ընթացքում մանրամասն ներկայացվել և քննարկվել են 2024-2025թթ. ընթացքում, 27-րդ և 28-րդ նիստերի միջակայքում, մասնակից երկրների, միջկառավարական խորհրդի կողմից իրականացված աշխատանքները և 2023-2030 թվականների հեռանկարային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման հետագա քայլերը:

Խորհրդի նախագահությունը Ղրղզստանի Հանրապետությունից (Նախագահող՝ Ժուսուպբեկով Մարատ Մամբերտովիչ, Ղրղզստանի Հանրապետության բնական ռեսուրսների, էկոլոգիայի և տեխնիկական հսկողության նախարար – Ղրղզստանի երկրաբանական ծառայության տնօրեն) փոխանցվեց Ղազախստանի Հանրապետությանը (նախագահող՝ Ակբարով Երլեն Եսենալիևիչ, Ղազախստանի Հանրապետության արդյունաբերության և շինարարության նախարարության Երկրաբանության կոմիտեի նախագահ):

ԱՊՀ մասնակից-պետությունների երկրաբանական ծառայությունների (կառույցների) կողմից 2024-2025 թվականների ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքների ներկայացում:

2023-2030 թվականների հեռանկարային ծրագրով նախատեսված աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով մասնակից-պետությունների միջև մասնակցային համագործակցության ընդլայնման և արդիական հարցերի ու համագործակցության ուղղությունների քննարկման նպատակներով միջկառավարական խորհրդի նստաշրջանների միջև միջանկյալ աշխատանքային քննարկումների կազմակերպման հնարավորությունների դիտարկում, կատարված աշխատանքների մասին առանձին զեկույցների ներկայացում:

ԱՊՀ ընդերքի հետախուզման, օգտագործման և պահպանության միջկառավարական խորհրդի 29-րդ նիստի անցկացման վայրի և ժամկետների քննարկում (2025 թվականին 28-րդ նիստը կանցկացվի Բելառուսի Հանրապետությունում, անցկացման ժամկետների և վայրի վերաբերյալ տեղեկությունը միջկառավարական խորհրդի մասնակից-պետություններին կտեղեկացվի լրացուցիչ), ինչպես նաև նախնական համաձայնեցվեց հոբելյանական 30-րդ նիստը 2027 թվականին անցկացնել Ռուսաստանի Դաշնությունում:

Մասնակից-պետությունների ներկայացուցիչների և փորձագետների կողմից երկրաբանական ուսումնասիրությունների, համատեղ իրականացված ծրագրերի մասնրամասն ներկայացում և մասնագիտական հարցերի քննարկում:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Ներկայացրել եմ ՀՀ կողմից 2024-2025 թվականների ընթացքում և 2023-2030 թթ. հեռանկարային ծրագրով իականացված աշխատանքների արդյունքների մասին զեկույց: Զեկուցման ընթացքում նշվեց, որ պլանի մի շարք ուղղությունների (նախագիծ) գծով, որոնք կրում են գիտահետազոտական բնույթ, կարող են իրականացվել գիտահետազոտական տարբեր խմբերի կողմից, այդ թվում մասնակից-պետությունների համապատասխան խմբերի հետ համատեղ, արտաքին դրամաշնորհների միջոցով և նման ուղղվածությամբ գիտահետազոտական թեմաները կարող են համարվել առաջնահերթ: Նշվեց նաև, որ ծրագրի մի շարք ուղղություններ, որտեղ Հայաստանը համակարգող-պետություն է կամ համակատարող (հետաքրքրված է այդ ուղղությամբ), ընդգրկված են ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում: Ներկայացվեց հեռանկարային ծրագրի 17-րդ, 33-րդ և 35-րդ ուղղություններով, որտեղ ՀՀ-ն հանդիսանում է համակարգող-պետություն, իրականացված աշխատանքների մասին հաշվետվությունը: Նշվեց նաև, որ ծրագրի 1-ին, 10-րդ, 29-րդ, 30-րդ, 38-րդ և 40-րդ նախագծերի ուղղությամբ աշխատանքները սկսվել են և կրում եմ շարունակական բնույթ, և հնարավոր են առաջիկա տարիների ընթացքում նաև այս ուղություններով մասնակից երկրների հետ համագործակցության նոր ուղիների մշակում:

Հատկապես ընդգծվեց ՀՀ-ում ընդերքօգտագործման ոլորտում իրական շահառուների (սեփականատերերի) հայտարարագրման էլեկտրոնային ռեգիստրի ստեղծման աշխատանքների իրականացման և արդեն 2021 թվականից հայտարարագրերը էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգի ամբողջական գործարկման, ինչպես նաև իրական շահառուների հայտարարագրման գործընթացի ընդլայնման և վերաձևավորման և իրական շահառուների հայտարարագրման ոլորտի ընդլայնման մասին: Հայատանում այս ուղղությամբ գրանցված առաջընթացի, փորձի փոխանակման, համակարգի բարելավման ու մշատադիտարկման գործիքակազմերի մշակմանն ուղղված աշխատանքերի իրականացման մասին: Նշվեց նաև, որ մասնակից-պետությունների կողմից ցանկության դեպքում Հայաստանի փորձն այս ուղղությամբ կարող է ներկայացվել և անհրաժեշտության դեպքում կազմակերպվել ՀՀ փորձի փոխանակման միջոցառումներ տարբեր ձևաչափերով:

Ներկայացվեց ՀՀ ստորերկրյա ածխաթթվային հանքային ջրերի գույքագրման և տեղեկատվական բազքայի մշակման, այն ազգային տարածական ենթակառուցվածքների գեոպորտալին ինտեգրման աշխատանքների կատարման մասին:

Ներկայացվեց Հայաստանում գեոպարկերի և երկրաբանական հուշարձանների ստեղծման մասին տեղեկատվությունը, իրականացված և մեկնարկած աշխատանքների մասին ամփոփ ակնարկ տրվեց:

Ներկայացվեց նաև Հայաստանում առաջին անգամ կազմակերպված «Պատանի Երկրաբան» ամառային դպրոցի մասին, որը կարող է խթան հանդիսանալ ինչպես երկրում մասնագիտության հանդեպ ուշադրության բարձրացման, երիտասարդներին դեպի մասնագիտությունը ծանաթացնելու, այնպես էլ հետագայում պատանի երկրաբանների միջազգային տարբեր մրցույթներին Հայաստանի մասնակցությունն ապահովելու համար:

Մասնակից-պետությունների ներկայացուցիչների և փորձագետների կողմից իրականացված և նախատեսվող աշխատանքների մասին զեկուցումների արդյունքում յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ եղան առանձին քննարկումներ, որտեղ ընդգծվեց բոլոր մասնակիցների կողմից նախագծերի մասնակցության և աշխատանքների իրականացման ուղղությամբ համատեղ ծրագրերի կատարման, առկա տեղեկատվության փոխանակման, աշխատանքներին տարբեր կազմակերպությունների ներգրավման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Քննարկեցին և կարևորվեցին հատկապես երկրաբանական տեղեկատվության թվայնացման, թվային քարտեզների ստեղծման և հասանելիության, ընդերքօգտագործման իրավունքների թվայնացման, թվային բազային հենքի ստեղծման և իրավունքի տրամադրման մեկ պատուհանի կիրառման ուղղությամբ իրականացված աշխատանքներն ու խնդիրները, հետագա քայլերը:

Նիստի ընթացքում տարբեր մասնակից-երկրների ներկայացուցիչների հետ առանձին քննարկվել են համագործակցության հնարավորության հարցեր: ՌԴ ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռ բերվել իրենց կողմից արդեն իսկ իրականացված քարտեզների թվայնացման աշխատանքների վերաբերյալ փորձի փոխանակման:

Ինչպես նիստի ընթացքում, այնպես էլ դրան նախորդող և հոջորդող ժամանակահատվածում եղան նաև առանձին հանդիպումներ:

Սեպտեմբերի 24-ին, Ղազախստանի Երկրաբանական կոմիտեի Ազգային երկրաբանական ծառայությունում, ծառայության ղեկավար անձնակազմի հետ մանրամասն քննարկվեցին ռեսուրսների կառավարման ոլորտում իրենց փորձի, տվյալների թվայնացման և CRIRSCO-ին անցում կատարելու և ներդրման հարցերը: Իսկ ղեկավար անձնակազմի հետ հանդիպումից հետո ավելի ծանոթանալու թվայնացման աշխատանքների արդյունքում ստեղծված տեղեկատվական պորտալին, այնտեղ արտացոլված տեղեկատվությանը, հասանելիությանը և տվյալների բազայի հիմնական ուղղություններին:

Eurasian Resources Group կազմակերպության Աստանայի գրասենյակում հնարավորություն եղավ հանդիպելու և ծանոթանալու հորատահանուկների լայնամասշտաբ պահպանության, դրանց հաշվառման և տեղեկատվական բազայի ստեղծման աշխատանքների և կրկին երկրաբանական տեղեկատվության թվայնացման և թվային բազաների ստեղծման աշխատանքներին:

Հաջորդ հանդիպումը Ղազախստանի ընդերքի ոլորտի մասնագիտական հանրության անկախ փորձագետների Կոմիտեի Նախագահ Ֆրեյման Գեորգի Գեորգիևիչի հետ էր սեպտեմբերի 27-ին: Վերջինիս հետ կրկին մանրամասն քննարկվեցին Ղազախստանի CRIRSCO-ին անդամակցության քայլերը, դրան նախորդած աշխատանքները, մասնագետների որակավորման բարձրացման և ներգրավման, նոր ստանդարտների ներդրման խնդիրներն ու առավելությունները, քայլերի հաջորդականությունը:

Բոլոր հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռ բերվեց շարունակելու համագործակցության և փորձի փոխանակման աշխատանքները:

28-րդ նիստի արդյունքում ՀՀ ներկայացուցիչ, ՀՀ ՏԿԵՆ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն Հարություն Մովսիսյանը պարգևատրվեց Միջկառավարական խորհրդի Պատվոնշանով Երկրաբանական համագործակցության ակտիվ մասնակցության և ձեռքբերումների համար:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԿԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Խորհրդի անդամների կողմից ստորագրվել է 28-րդ նիստի արձանագրությունը՝ յուրաքանչյուր երկրի համար առանձնացված օրինակով:

Հարություն Մովսիսյան

30 Սեպտեմբեր, 2025